«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ)	УСЛОВИЯ ПРЕДОСТАВЛЕНИЯ БРОКЕРСКИХ УСЛУГ И ДЕПОЗИТАРНОГО ОБСЛУЖИВАНИЯ НА РЫНКЕ ЦЕННЫХ БУМАГ СО СТОРОНЫ ЗАО "БАНК ВТБ АРМЕНИЯ" (ПУБЛИЧНАЯ ОФЕРТА)
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ **Հասցե՝ ՀՀ, 0006, ք. Երևան, Մանանդյան 33/3** **Հեռ.՝ 87-87, (+374 8000) 87-87 (արտասահմանից զանգելու դեպքում)** **Էլեկտրոնային հասցե՝ headoffice@vtb.am** **Բանկի պաշտոնական կայք՝ www.vtb.am**	**ЗАО "Банк ВТБ (Армения)"** **Адрес: РА, 0006, г. Ереван, ул.Манандяна 33/3** **Тел.: 87-87, (+374 8000) 87-87 (в случае звонка из-за границы)** **Электронный адрес: headoffice@vtb.am** **Официальный сайт Банка: www.vtb.am**
ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ՝ Սույն ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից արժեթղթերի շուկայում մատուցվող բրոքերային ծառայությունների և պահառության սպասարկման պայմանները» (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից ֆիզիկական, իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդիներին (այսուհետ՝ Հաճախորդ) մատուցվող սույն Պայմաններում ներառված ծառայությունների ընդհանուր պայմանները, այդ ծառայություններից օգտվելու կանոնները, Հաճախորդների և Բանկի իրավունքներն ու պարտականությունները, փոխադարձ ստանձնած պարտավորությունների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները և Բանկի ու Հաճախորդի միջև առաջացած վեճերի լուծման տարբերակները: Սույն Պայմանները հանդիսանում են Բանկի ներքին իրավական փաստաթուղթ, ինչը Բանկի հրապարակային առաջարկն (օֆերտա) է կնքելու պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) Բանկի կողմից սույն Պայմանների շրջանակում մատուցվող և Հաճախորդի նախընտրած ծառայության վերաբերյալ (այսուհետ՝ Ծառայություն):	УВАЖАЕМЫЙ КЛИЕНТ: Настоящие "Условия предоставления брокерских услуг и депозитарного обслуживания на рынке ценных бумаг со стороны ЗАО "Банк ВТБ Армения"" (далее – Условия) устанавливают общие условия оказываемых услуг, правила пользования данными услугами, права и обязанности Клиентов и Банка, средства ответственности, предусмотренные при нарушении взаимных обязательств и варианты разрешения споров между Банком и Клиентом, включенные в настоящие Условия и предоставляемые со стороны ЗАО "Банк ВТБ Армения" (далее – Банк) клиентам физическим, юридическим лицам и индивидуальным предпринимателям (далее – Клиент). Настоящие Условия являются внутренним юридическим документом Банка, который представляет собой публичное предложение Банка (оферта) заключить договор (далее – Договор) предоставления со стороны Банка, в рамках настоящих Условий, услуг, выбранным со стороны Клиента (далее – Услуга).
ԾԱՆՈՒՑՈՒՄ	УЕДОМЛЕНИЕ

ՀԱՐԳԵԼԻ ՀԱՃԱԽՈՐԴ՝ Բանկը տեղեկացնում է, որ ստորագրելով «ՎՏԲ Կապիտալ Բրոքեր» ՍՊԸ-ի կողմից սպասարկվող առևտրային համակարգի դիտման և գործարք կատարելու հասանելիություն տրամադրելու վերաբերյալ համաձայնագիրը, Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է սույն Ծանուցմանը և տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Բանկը մշակի Հաճախորդի անձնական տվյալները, այն է՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշի կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Հաճախորդի ինքնությունը համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի: Հաճախորոդի անձնական տվյալները մշակվելու են՝ իր և Բանկի միջև պայմանագրեր/համաձայնագրեր կնքելու, հետագայում Բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու, Բանկի կողմից անցկացվող ակցիաների/առաջարկների/այլ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: «ՎՏԲ Կապիտալ Բրոքեր» ՍՊԸ առևտրային համակարգի ծառայություններից օգտվելու դեպքում՝ Հաճախորդի անձնական տվյալները տրամադրվելու են «ՎՏԲ Կապիտալ Բրոքեր» ՍՊԸ-ին և այդ համակարգում իր կողմից կատարված գործարքների վերաբերյալ անհրաժեշտությունից ելնելով՝ երրորդ անձանց: Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հաճախորդի անձնական տվյալների հետ այնպիսի գործողություններ կատարելու համար (հավաքագրում, ամրագրում, մուտքագրում, համակարգում, պահպանում, օգտագործում և այլն), որոնք անհրաժեշտ են սույն Ծանուցման մեջ նշված	УВАЖАЕМЫЙ КЛИЕН Банк сообщает, что подписывая соглашение о предоставлении доступа для наблюдения и заключения сделок в торговой системе, обслуживаемой ООО “ВТБ Капитал Брокер”, Клиент подтверждаете, что информирован о настоящем Уведомлении и дает свое согласие Банку на обработку его персональных данных, а именно: фамилии, имени, отчества, данных документа, удостоверяющего личность, данных социальной карты/номера общественных услуг или справки об их отсутствии, адреса, телефона и/или прочей информации, которая дает возможность напрямую или косвенно идентифицировать личность Клиента, согласно закону РА “О защите персональных данных”. Персональные данные Клиента будут подвергнуты обработке с целью заключения между ним и Банком договоров/соглашений, пользования в дальнейшем услугами, предоставляемыми Банком, получения информации относительно проводимых Банком акций/предложений/других услуг. В случае использования услугами торгоой системы ООО “ВТБ Капитал Брокер”, персональные данные Клиента будут предоставлены ООО “ВТБ Капитал Брокер”, и исходя из необходимости, в связи со сделками, осуществленными в данной системе, также и третьим лицам. Согласие на обработку персональных данных дается для совершения, согласно закону РА “О защите персональных данных”, таких действий с персональными данными Клиента (сбор, резервирование, ввод, систематизация, хранение, использование и т.п.), которые необходимы для достижения целей, указанных в настоящем Уведомлении, и исполнения

նպատակներին և ՀՀ օրենսդրությամբ Բանկի վրա դրված պարտականությունների կատարմանը հասնելու համար: Անձնական տվյալների մշակման համաձայնությունը համարվում է Հաճախորդի կողմից տրված, և Բանկը ստանում է Հաճախորդի անձնական տվյալները մշակելու իրավունք՝ Հաճախորդի և Բանկի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում այդ պայմանագրերով սահմանված գործողությունների կատարման նպատակով, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ այդ տվյալների մշակման պահանջն ուղղակիորեն սահմանված է օրենքով: Հաճախորդի կողմից իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնության գրավոր հետ կանչման, կամ անձնական տվյալների ուղղում կամ ոչնչացում (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար) կատարելու պահանջ ներկայացնելու դեպքում՝ Բանկը պարտավորվում է դադարեցնել Հաճախորդի անձնական տվյալների մշակման գործողությունները կամ ուղղել կամ ոչնչացնել Հաճախորդի անձնական տվյալները տասն աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հաճախորդի և Բանկի միջև առկա չեն չկատարված պարտավորություններ և բացակայում են գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես Հաճախորդի և Բանկի միջև պայմանագրային հարաբերությունները ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաճախորդի կողմից անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում Հաճախորդի անձնական տվյալները դադարում են մշակվել Բանկի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:	обязанностей, возложенных на Банк Законодательством РА. Согласие на обработку персональных данных считается выданным Клиентом, и Банк получает право на обработку персональных данных Клиента в течение действия договоров/соглашений, заключенных между Клиентом и Банком с целью совершения действий, установленных этими договорами/соглашениями, а также во всех случаях, когда требование на обработку этих данных напрямую установлено законом. В случае предъявления со стороны Клиента требования о письменном отзыве согласия на обработку персональных данных, или исправления или удаления персональных данных (если персональные данные неполные или неточные или устарели или приобретены незаконным путем или в них нет необходимости для достижения целей обработки), Банк в течение десяти дней обязуется прекратить действия по обработке персональных данных Клиента или исправить или удалить его персональные данные, если между Клиентом и Банком не имеются невыполненные обязательства и отсутствуют действующие договорные отношения, в противном случае договорные отношения между Клиентом и Банком подлежат прекращению со всеми вытекающими из этого негативными последствиями. В случае предъявления требования об отзыве Согласия на обработку персональных данных Клиента или их удаления, обработка Банком его персональных данных прекращается, однако они сохраняются в информационном архиве и могут использоваться только в случаях, предусмотренных законодательством. Отзыв Согласия обратной силы не имеет.

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը տրվում է պայմանագրերի/համաձայնագրերի գործողության ողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այդ դեպքերի համար սահմանված ժամանակահատվածի համար:	Согласие на обработку персональных данных дается на весь срок действия договоров/соглашений, а в установленных законодательством РА случаях – на период, установленный для таких случаев.
1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	1.**ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ**
1.1.Պայմանները, Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները (Սակագին), _____ (այսուհետ՝ Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններ), _____ կանոնները (այսուհետ՝ Պահառության սպասարկման կանոններ) (այսուհետ՝ երկու կանոնները միասին՝ Կանոններ), սահմանվում և հաստատվում են Բանկի համապատասխան կառավարման մարմնի կողմից և կարող են միակողմանի փոփոխվել վերջինիս կողմից:	1.1. Условия, тарифы по предоставлению услуг со стороны Банка (Тариф)_____(далее – правила предоставления Брокерских услуг), _____(далее – правила Депозитарного обслуживания) (далее оба правила именуемые вместе – Правила), устанавливаются и утверждаются со стороны уполномоченного органа упраления Банка и могут быть односторонне изменены со стороны последнего.
1.2.Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել սույն Պայմանները, Կանոնները և Սակագները: Պայմաններում, Կանոններում և Սակագներում փոփոխություն կատարվելու դեպքում Բանկը պարտավորվում է օրենսդրությամբ, Կանոններով և/կամ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում վերջինիս ծանուցել տվյալ պայմանագրով մատուցվող ծառայության Պայմանների, Կանոնների և Սակագների փոփոխությունները:	1.2. Банк имеет право односторонне изменить настоящие Условия, Правила и Тарифы. В случае осуществления изменений в Условиях, Правилах и Тарифах, Банк обязан уведомить Клиента о произошедших в данных Условиях, Правилах и Тарифах изменениях согласно требованиям законодательста, Правилам и/или в установленном заключенным между Банком и Клиентом соответствующим договорам порядке и сроках.
1.3.Բանկը պարտավորվում է ապահովել Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը: Բանկային գաղտնիք են համարվում Բանկի Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկին հայտնի դարձած Հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, Հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ Հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության	1.3. Банк обязуется обеспечить конфиденциальность информации, ставшей известной в процессе обслуживания Клиента, и которая согласно законодательсту РА является конфиденциальной информацией, содержащей банковскую тайну. Банковской тайной считаются сведения о счетах клиента, ставших известными Банку в связи с обслуживанием Клиента Банка, сведения об операциях, совершенных по поручению Клиента или в его пользу, а также его коммерческая тайна, сведения о любой программе его деятельности или о разработке, изобретении, промышленном образце и любое

ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը Հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և Բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:	другое сведение о нем, которое Клиент был намерен сохранить в тайне, и Банк знал или мог знать об этом намерении.
1.4.Հաճախորդի, նրա հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Հաճախորդին և նրա օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց՝ Հաճախորդի համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Հաճախորդին սպասարկելու կապակցությամբ Բանկն իրավունք ունի նման տեղեկություններ հաղորդել վճարահաշվարկային համակարգերի օպերատորներին, քարտային վերջնահաշվարկի մասնակիցներին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասու մարմիններին:	1.4. Сведения о Клиенте, его счетах и заключенных по ним операциях могут быть предоставлены только Клиенту и его законному представителю, а также другим лицам: при согласии Клиента или согласно порядку, утвержденному законодательством РА. Конфиденциальность по счетам и заключенным по ним операциям гарантируется законодательством РА. При обслуживании Клиента Банк имеет право сообщать данные сведения операторам платежных систем, участникам взаиморасчетов по картам и другим уполномеченным органам, установленным законодательством РА.
1.5.Բանկը պատասխանատու չէ պետական մարմինների գործողությունների կամ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ սարքավորումների անսարքության կամ էլեկտրաէներգիայի մատակարարման չնախատեսված ընդհատումների կամ խափանման հետևանքով առաջացած Հաճախորդի վնասների, կորուստների կամ ուշացման դեպքերի համար:	1.5. Банк не несет ответственности за понесенные Клиентом ущерб, убытки, или случаи просрочки вследствие действий государственных органов или непреодолимой силы, включая неисправность оборудования и непредусмотренные отключения или перебои в электроснабжении.
1.6.Բանկը Հաճախորդներին սպասարկելիս ղեկավարվում է ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներով: Բանկը ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրության, Բանկի կողմից սահմանված ներքին իրավական ակտերի, Կանոնների, Պայմանների և Սակագների պահանջներին համապատասխան:	1.6. При обслуживании Клиентов Банк руководствуется законодательством РА и требованиями внутренних правовых актов Банка. Банк предоставляет услуги с учетом требоаний законодательста РА, установленных Банком внутренних правовых актов, Правил, Условий и Тарифов.

1.7.Հաճախորդը ցանկացած ժամանակ Բանկի տարածքում կարող է ծանոթանալ Բանկի կողմից իրականացվող սույն Պայմաններին, Կանոններին, Սակագներին և այլ հրապարակային տեղեկատվությանը, որոնք տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում:	1.7. Клиент в любое время на территории Банка может ознакомиться с настоящими Условиями, Правилами, Тарифами и другой публичной информацией, размещенными на официальном сайте Банка.
1.8.Հաճախորդը պարտավորվում է իր կողմից տրամադրված տեղեկությունների՝ անձը հաստատող փաստաթղթի, հասցեի, այդ թվում էլեկտրոնային հասցեի, հեռախոսահամարի և այլ տվյալների, որոնք նախօրոք տրամադրվել էին Բանկին, փոփոխության դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին: Սույն պարտավորության չկատարման հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:	1.8.Клиент обязуется незамедлительно сообщить Банку информацию касательно изменения документа, удостоверящего личность, адреса, в том числе электронного адреса, номера телефона и другой информации, которая заранее была предоставлена Банку. Банк не несет ответственности за возникшие неблагоприятные последствия при неисполнении данного условия.
1.9.Հաճախորդը պատասխանատվություն է կրում իր Հաշվով՝ այդ թվում վարկային, կատարվող գործարքների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելու, ինչպես նաև հաշիվ բացելու և գործարք կատարելու հիմք հանդիսացած փաստաթղթերի և դրանցում կատարված փոփոխությունների ճշտության համար:	1.9. Клиент несет ответственность за соответствие произведенных по счету, в том числе кредитному, операций законодательству РА, а также за точность документов, служащих основанием для открытия счета и совершения сделки, за внесенные в них изменения.
1.10.Հաճախորդը պարտավոր է իր բոլոր տիպի արժույթներով հաշիվներում/ավանդում առկա և մուտքագրվող դրամական միջոցները, այդ թվում վարկային միջոցները չօգտագործել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման, փողերի լվացման, ահաբեկչական գործունեության, ահաբեկչության ֆինանսավորման մեջ:	1.10. Клиент обязуется не использовать свои имеющиеся и поступающие денежные средства, находящиеся на всех его (мультивалютных) счетах/вкладах по разным валютам, в том числе и кредитные средства с целью легализации доходов, полученных преступным путем, отмыванию денежных средств, террористических действий или финансированию терроризма.

1.11. Ի կատարումն «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին» ԱՄՆ օրենքի (այսուհետ՝ FATCA) պահանջների՝ Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փակել Հաճախորդի հաշիվը, եթե վերջինիս տվյալներում Բանկի կողմից հայտնաբերվել են ԱՄՆ հարկատուի հատկանիշներ (այն է՝ ԱՄՆ քաղաքացիություն, ԱՄՆ ռեզիդենտությունն, ԱՄՆ-ում մշտական գտնվելու թույլտվություն, ԱՄՆ-ում ծննդավայրի, ԱՄՆ-ում բնակության և/կամ փոստային հասցեի, ԱՄՆ տարածքում կոնտակտային հեռախոսահամար և/կամ ֆաքսի համարի, ԱՄՆ-ում գրանցման հասցե ունեցող անձին տրամադրված լիազորագրի կամ ստորագրության իրավունքի և ԱՄՆ-ում գտնվող հաշվին մեկ անգամից ավել փոխանցման իրականացման համար տրված Պարբերական վճարումների հանձնարարականի առկայություն) և Հաճախորդը հրաժարվում է Բանկին տրամադրել իր վերաբերյալ տեղեկատվությունը ԱՄՆ Հարկային ծառայությանը/ ԱՄՆ հարկային գործակալի գործառույթ իրականացնող անձին FATCA-ի պահանջների համաձայն:	1.11. Во исполнение требований закона США “О налогообложении заграничных счетов” (далее - FATCA), Банк вправе в одностороннем порядке закрыть счет Клиента, если в данных последнего Банком были обнаружены признаки налогоплательщика США (а именно: гражданства США, резидентства США, разрешения на постоянное проживание в США, рождения в США, наличия адреса проживания и/или почтового адреса в США, контактных телефонных номеров или факса в США, доверенности или права на подпись, выданные лицу, в адресом регистрации в США и наличие периодических платежных поручений на перевод (более одного раза) на счет, находящийся в США) и Клиент отказываетесь предъявить Банку информацию относительно него Налоговой службе США /лицу, осуществляющему функции налогового агента, согласно требованиям FATCA.
1.12. Բանկն իրավունք ունի Հաճախորդի սպասարկման ընթացքում փաստաթղթերում կամ Հաճախորդի կողմից գործառնությունների իրականացման ընթացքում հիմնավոր կասկածներ հայտնաբերելու դեպքում կասեցնել գործառնության կատարումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:	1.12. Банк имеет право в процессе обслуживания Клиента в случае обнаружении обоснованных сомнений в документах или при совершении операций со стороны последнего, приостановить выполнение операции в порядке, установленном законодательством РА.
1.13.Ծառայությունների մատուցման իմաստով «Բանկային օր» են համարվում այն օրացուցային օրերը, երբ Բանկը բաց է բանկային գործառնությունների համար: Գործարքների իրականացման ժամանակը Երևանի ժամանակն է:	1.13. С точки зрения предоставления услуг, "Банковским днем" считаются те календарные дни, когда Банк открыт для совершения банковских операций. Временем совершения сделок считать время по Еревану.

2. ԱՐԺԵԹՂԹՂԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 2.1. Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման պայմագրով (այսուհետ՝ Բրոքերային պայմանագիր) Բանկը պարտավորվում է Հաճախորդի պատվերով, վարձատրության դիմաց իրականացնել քաղաքացիա-իրավական գործարքներ արժեթղթերով՝ գործելով իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին:	2. **ПРАВИЛА ПРЕДОСТАВЛЕНИЯ БРОКЕРСКИХ УСЛУГ НА РЫНКЕ ЦЕННЫХ БУМАГ** 2.1. Договором предоставления брокерских услуг на рынке ценных бумаг (далее "Брокерский договор") Банк обязуется за вознаграждение совершать гражданско-правовые сделки с ценными бумагами по заявке Клиента, действуя при этом от своего имени или от имени Клиента и за счет Клиента.
2.2. Բրոքերային պայմանագրի կատարման ժամանակ Բանկն առաջնորդվում է Հաճախորդի պատվերով, ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև տվյալ ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով և լրացուցիչ համաձայնագրերով:	2.2. При исполнении Брокерского договора Банк руководствуется заявками Клиента, требованиями действующего законодательства РА, а также другими нормативными актами, регулирующими данную сферу и дополнительными соглашениями.
2.3. Բանկը բրոքերային ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և/կամ առևտրին թույլատրված կամ ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ ՀՀ տարածքից դուրս գործող կարգավորող շուկաների ցանկում ընդրկված որևէ կարգավորող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով:	2.3. Банк предоставляет брокерские услуги в пределах РА, а также с ценными бумагами, публичное предложение (продажа) и/или торговля которыми разрешена в иностранном государстве, включенном в установленный нормативно-правовыми актами ЦБ РА перечень иностранных государств, или торговля которыми разрешена на каком-либо регулируемом рынке ценных бумаг, включенном в перечень ЦБ РА регулируемых рынков, действующих за пределами РА.
2.4. Բրոքերային ծառայությունների դիմաց վարձատրությունը.	**2.4. Вознаграждение за брокерские услуги:**
2.4.1. Բրոքերային ծառայությունների վճարների չափը սահմանվում է Բանկի կողմից հաստատված Սակագներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի միջև կնքված Բրոքերային պայմանագրերով ու համաձայնագրերով (առկայության դեպքում):	2.4.1. Размер оплаты за брокерские услуги устанавливается соответствующими тарифами, утвержденными Банком, а также дополнительными соглашениями, заключенными между Клиентом и Банком (при наличии).

2.4.2. Սակագներով նախատեսված վճարները Բանկի կողմից անակցեպտ գանձվում են Հաճախորդի բրոքերային հաշվից կամ դրամային հաշվի/հաշիվների մնացորդից/ներից, իսկ տվյալ հաշվին/հաշիվներին համապատասխան միջոցների բացակայության դեպքում՝ Հաճախորդի արտարժութային հաշվից/հաշիվներից, գանձման պահին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հայտարարած ֆինանսական շուկայում ձևավորված միջին փոխարժեքի վերջին հասանելի տվյալով:	2.4.2. Платежи, предусмотренные тарифами, Банк безакцептно взимает с брокерского счета или с остатка/остатков денежного счета/счетов Клиента. Однако, при отсутствии на данном счете/счетах соответствующих средств, суммы, подлежащие к взысканию Банком, взискиваются с валютного/валютных счета/счетов Клиента, по обьявленному ЦБ РА на момент взискания среднему обменному курсу, сформированному на финансовом рынке.
2.4.3. Հաճախորդը պարտավոր է Բանկին փոխհատուցել իր պատվերը իրականացնելու հետ կապված երրորդ անձանց վճարման ենթակա միջոցները (Ֆոնդային բորսա, բրոքերներ, գործակալներ և այլ):	2.4.3. Клиент обязан возместить Банку средства для оплаты услуг третьих лиц (Фондовая Биржа, брокеры, агенты и.т.д), связанных с исполнением Банком заявок Клиента.
2.4.4. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել բրոքերային ծառայությունների մատուցման Սակագները՝ Հաճախորդին այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 20 աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով: Ծանուցումը կատարվում է Հաճախորդի քարտում նշված եղանակով: Համաձայն չլինելու դեպքում Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Բանկի և Հաճախորդի միջև կնքված Բրոքերային պայմանագիրը՝ օրենքով սահմանված կարգով, որի դեպքում փոխադարձ հաշվարկները կատարվում են նախկին Սակագներով:	2.4.4. Банк имеет право односторонне изменить тарифы с условием уведомления об этом Клиента не менее чем за 20 рабочих дней до вступления в силу этих изменений. Уведомление производится способом, указанным в карте Клиента. В случае несогласия, Клиент может односторонне расторгнуть настоящий Брокерский договор в установленном законом порядке, в случае чего взаиморасчеты производятся согласно с прежними тарифами.
2.4.5. Բանկն իրավունք ունի Հաճախորդին լրացուցիչ՝ Բրոքերային պայմանագրով չսահմանված, ծառայություններ մատուցելու դեպքում գանձել լրացուցիչ վճարներ՝ Հաճախորդի և Բանկի միջև համապատասխան լրացուցիչ համաձայնագրի առկայության դեպքում:	2.4.5. При оказании Клиенту дополнительных услуг, не установленных Брокерским договором, Банк вправе взыскать дополнительную плату – при наличии дополнительного соглашения между Банком и Клиентом.
2.5. Պատվերների ներկայացման և կատարման կարգ՝	**2.5. Порядок представления и выполнения заявок**

2.5.1. Բրոքերային գործարքի կատարման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի պատվերը: Պատվերի ձևն ու բովանդակությունը կախված է գործարքի տեսակից և գործարքի կնքման վայրից (բորսայական/ արտաբորսայական, առաջնային/ երկրորդային շուկա) և սահմանվում են Բանկի Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով, Բրոքերային պայմանագրով և լրացուցիչ համաձայնագրերով:	2.5.1. Основанием для совершения брокерской сделки является заявка Клиента. Форма и содержание заявок зависят от вида сделки и от места совершения сделки (первичный/вторичный, биржевой/внебиржевой рынок) и устанавливаются внутренними Правилами предоставления Брокерских услуг, Брокерским договором и дополнительными соглашениями.
2.5.2. Հաճախորդը պատվերում պետք է նշի գործարքի կոնկրետ կատարման պայմանները: Դրանք են՝ **<u>Գնային պայմաններ</u>** ա) **Լիմիտային պատվեր**: Առքի դեպքում պատվերում նշված գնով կամ դրանից ավելի ցածր գնով (վաճառքի դեպքում՝ պատվերում նշված գնով կամ դրանից ավելի բարձր գնով) որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվեր: բ) **Շուկայական պատվեր**: Շուկայում տվյալ պահին ձևավորված գնով որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվեր: գ) **Գնման/վաճառքի ստոպ պատվեր**: Պատվեր, որը նախատեսում է պատվերի կատարում (արժեթղթերի առք/վաճառք) ՝ նրանում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում: դ) **Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր**: Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով: **<u>Քանակական պայմաններ</u>** ա) **Բավարարել լրիվ պատվերը**: Պատվերի տեսակ որը նախատեսում է պատվերի կատարում՝ նրանում նշված քանակով արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով: բ) **Բավարարել մասնակի պատվերը**, որը նախատեսում է պատվերի մասնակիորեն կատարում՝ մնացորդը պատվերների հերթում ընդգրկելու պայմանով:	2.5.2. Клиент должен указать конкретные условия выполнения заявки. В частности: **<u>Ценовые условия</u>** а) **Лимитная заявка**. Заявка на куплю/ продажу определенного объема ценных бумаг за цену, или за более низкую цену – в случае покупки (а в случае продажи – за цену, указанную в договоре, или за более высокую цену). б) **Рыночная заявка**. Заявка на куплю/ продажу определенного объема ценных бумаг за цену, сформировавшуюся на рынке в данный момент; в) **Стоп заявка купли/продажи**. Заявка, предполагающая ее выполнение (купля/продажа ценных бумаг) на Бирже или вне Биржи в случае достижения цены, указанной в заявке. г) **Стоп лимитная заявка купли/продажи**. Заявка, которая одновременно включает лимитную заявку купли (продажи) по одной цене и стоп заявку купли (продажи) по другой цене. **<u>Количественные условия</u>** а) **Удовлетворить полностью**. Вид заявки, предполагающий исполнение заявки, с условием купли или продажи конкретно отмеченного количества ценных бумаг. б) **Удовлетворить частично**. Вид заявки, который предполагает частичное исполнение заявки, с условием включения остатка в очередь Заявок.

գ) **Հանել մնացորդը**, պատվեր որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում պատվերում նշված արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը պատվերների հերթում չընդգրկելու պայմանով: **<u>Ժամանակային պայմաններ</u>** ա) **Անմիջապես բավարարել կամ հանել պատվերը**, պատվերի տեսակ որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում՝ նրանում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում պատվերը չընդգրկելով պատվերների հերթում: բ) **Պահել հերթում մինչև բավարարումը**, այս պատվերը նախատեսում է, որ պատվերը կարող է մնալ հերթում՝ մինչև պատվերում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը	в) **Снять остаток**. Вид заявки, который предполагает немедленное совершение сделки в нем отмеченным максимально возможным количеством, с условием невключения остатка в очередь заявок. **<u>Временные условия</u>** а) **“Немедленно удовлетворить или снять”.** Вид заявки, который предполагает его немедленное выполнение по отмеченной в ней цене и количеству, в противоположном случае остаток не включается в очередь заявок. б) **Оставить в очереди до удовлетворения**, Заявка которая должна остаться в очереди, пока все количество указанных в заявке ценных бумаг не будет продано или куплено.
2.5.3. Պատվերի փոխանցման եղանակը ընտրում է Հաճախորդը, այն է՝ ա) **Թղթային (ներառյալ փաստաթղթերի փոխանցումը փոստով)**: Թղթային ձևով պատվերը ներկայացվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բանկում, մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և սպասարկողի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին: բ) **Էլեկտրոնային եղանակով պատվերի փոխանցում:** Այս եղանակով պատվերը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ էլեկտրոնային հասցեով կամ ՍԻԲԻԷՅՆԵԹ-ով: Այլ հասցեով ուղարկված պատվերը համարվում է չստացած: Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկին փոխանցի Էլեկտրոնային փոստով ուղարկված պատվերի բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված պատվերը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան նրա բնօրինակը: էլեկտրոնային փոստով ուղարկված պատվերի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային փոստով ուղարկված տարբերակը:	2.5.3. Способ представления заявки выбирает Клиент, в частности: а) **Бумажный (включая передачу почтой).** При бумажном способе Заявка представляется в 2 экземплярах, причем один экземпляр остается у Банка, а другой экземпляр с отметкой «Заявка принятаե и подписью специалиста, обслуживающего Клиента, возвращается Клиенту. б) **Передача заявки электронным способом**. Электронным способом Заявка должна быть отправлена по специальному адресу, предоставленному Банком, или «CBAnetե-у. Заявка, отправленная по другому адресу, считается неполученной. Клиент должен за возможно короткие сроки передать Банку оригинал отправленной по электронной почте заявки. Заявка, направленная по электронной почте, имеет ту же юридическую силу, что и его оригинал. При отличиях между заявкой, отправленной электронной почтой, и переданным в дальнейшем оригиналом, в основу принимается вариант, отправленный по электронной почте.

գ) **Ֆաքսիմիլային եղանակով պատվերի փոխանցում:** Ֆաքսիմիլային եղանակով պատվեր ներկայացնելու համար, Հաճախորդը նախորոք հեռախոսով պետք է տեղեկացնի պատասխանատու աշխատակցին՝ պատվեր ուղարկելու փաստի վերաբերյալ: Հանձնարարականը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ հեռախոսահամարով: Այլ հեռախոհամարով ուղարկված պատվերը համարվում է չստացած: Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկին փոխանցի ֆաքսիմիլային եղանակով ուղարկված պատվերի բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված պատվերը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան նրա բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված պատվերի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում ֆաքսիմիլային եղանակով ուղարկված տարբերակը:	в) **Заявки факсимильным способом**. Для представления поручения факсимильным способом Клиент должен заранее проинформировать Ответственного сотрудника по телефону об отправке поручения. Заявка должна быть отправлена по специальному предоставленному Банком телефонному номеру. Отправленная по другому телефонному номеру заявка счита¬ется неполученной. Клиент должен за возможно короткие сроки передать Банку оригинал заявки, отправленного факсимильным способом. Заявка, отправленная факсимиль¬ным способом, имеет ту же юридическую силу, что и его оригинал. В случае от¬личий между заявкой, отправленной факсимильным способом, и передан¬ным в дальнейшем оригиналом, в основу принимается вариант, отправленный факсимильным способом.
դ) **Հեռախոսով պատվերի փոխանցում**: Հաճախորդի կողմից հեռախոսով պատվերը կարող է ընդունվել, եթե այն ներկայացվել է Հաճախորդի նախնական համաձայնությամբ և Բանկի կողմից տեխնիկական հագեցվածության պահանջների պահպանման դեպքում (հեռախոսազրույցը պետք է պատշաճ ձևով ձայնագրվի, մասնավորապես պետք է գրանցվի պատվերի բովանդակությունը և այն ներկայացնելու փաստը): Հեռախոսով պատվեր փոխանցելու նպատակով Հաճախորդին տրամադրվում է հատուկ գաղտնագիր: Գաղտնագրի տարածման պատասխանատվությունը երրորդ անձանց կրում է Հաճախորդը: Հեռախոսով պատվեր փոխանցելու համար Հաճախորդը պետք է հայտնի գաղտնագիրը և անուն ազգանունը (անվանումը): Անձը, որը հեռախոսով հայտնել է գաղտնագիրը և Հաճախորդի անուն, ազգանունը (անվանումը) Բանկի կողմից դիտարկվելու է որպես Հաճախորդ:	г) **Передача заявки по телефону**. Заявка, переданная Клиентом по телефону, может быть принята, если она представлена с предварительного согласия Клиента и Банка с соблюдением требований технической оснащенности (телефонный разговор должен быть надлежащим образом записан, в частности, должны быть записаны содержание заявки и факт его представления). Для передачи заявки по телефону Клиенту предоставляется специальный пароль. Ответственность за распространение пароля среди третьих лиц несет Клиент. Для передачи заявки по телефону Клиент должен сообщить обслуживающему сотруднику пароль, фамилию и имя (наименование). Лицо, сообщившее по телефону пароль, имя и фамилию (наименование), рассматривается Банком в качестве Клиента.

2.5.4. Պատվերի տրամադրումը պետք է ուղեկցվի բրոքերային գործառնության կատարման համար հիմք հանդիսացող փաստաթղթերով:	2.5.4. Представление завки должно сопровождаться документом, являющимся основанием для совершения брокерской сделки.
2.5.5. Բանկն իրավունք ունի մերժել Հաճախորդի պատվերի ընդունումը հետևյալ դեպքերում՝ • Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում, • Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված պատվերի դեպքում, • Եթե Հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է պատվերը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում (արգելադրված են), • Եթե Հաճախորդի հաշիվներում բացակայում են համապատասխան դրամական միջոցները կամ արժեթղթերը, • Եթե Հաճախորդի կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային նպատակներին, • ՀՀ օրենսդրության, Բրոքերային ծառայությունների մատուցման կանոնների, Պայմանների պահանջներին պատվերում նշված պայմանների անհամապատասխանության դեպքում:	2.5.5. Банк имеет право отказать Клиенту в приеме заявки в следующих случаях: • при подозрении в несоответствии документа, удостоверяющего личность Клиента (его уполномоченного представителя); • при представлении заявки с отклонениями или с помарками от формы, установленной Правилами предоставления Брокерских услуг; • если денежные средства или ценные бумаги, в отношении которых представлена заявка, обременены правами иных лиц или находятся под арестом (блокированы); • если на счетах Клиента отсутствуют соответствующие денежные средства или ценные бумаги; • если совершение сделки по представленной Клиентом заявке противоречит инвестиционным целям Клиента; • при несоответствии указанных в заявке условий законодательству РА и Правилам.
2.5.6. Պատվերը ենթակա է կատարման դրանում նշված օրվա կամ դրա և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման օրվա ընթացքում՝ գործառնության կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում (արժեթղթերի և դրամական միջոցների բավարար մնացորդներ, հաշիվների կարգավիճակ և այլն):	2.5.6. Заявка подлежит исполнению в течение указанного в нем дня или в течение дня принятия этого поручения и необходимых документов – при наличии условий, необходимых для совершения операции (достаточный остаток ценных бумаг и денежных средств, статус счетов и.т.д).
2.5.7. Բանկը կարող է իրականացնել պատվերը մաս առ մաս, եթե պատվերով այլ բան նախատեսված չէ:	2.5.7. Банк может исполнить заявки по частям, если заявкой иное не предусмотрено.

2.5.8. Հաճախորդից (լիազորված ներկայացուցչից) պատվերի ընդունումը կատարվում է Բանկի գործառնական օրվա ընթացքում: Գործառնական օրվա ավարտին ընդունված պատվերը ընդունված է համարվում հաջորդ գործառնական օրվա ընթացքում:	2.5.8. Прием заявок от клиента (уполномоченного представителя) производится в течение операционного дня Банка. Заявка, принятая к окончанию операционного дня, считается принятой в течение следующего операционного дня.
2.5.9. Հաճախորդը կարող է ետ կանչել ներկայացված պատվերը կամ դրանում՝ ըստ պատվերի գնային, քանակական կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ պատվերով գործարք դեռևս չի կնքվել:	2.5.9. Клиент имеет право отозвать представленную заявку или внести в него изменения ценовых, количественных или временных условий, если по данной заявке сделка еще не совершена.
2.5.10. Բանկն իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի պատվերը կատարելուց այն դեպքում, երբ պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակից, գործարար շրջանառության սովորույթներից և այլնից: Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում Բանկն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ ուղարկելով համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում:	2.5.10. Банк имеет право отказаться от выполнения заявки Клиента в том случае, когда его выполнение невозможно в связи с рыночной ситуацией, обычаями делового обращения и др. При отказе в совершении заявки Банк информирует об этом Клиента, направляя ему соответствующее сообщение или уведомление.
2.5.11. Հաճախորդը կարող է իր դրամական միջոցների մնացորդը կամ դեպո հաշվի արժեթղթերը գերազանցող գործարք կատարել, եթե ունի Բանկի հետ կնքված մարժինալ գործարքների կատարման համաձայնագիր:	2.5.11. Клиент может совершить сделку на сумму, превышающую его денежные остатки или ценные бумаги на его счете депо, если имеет письменное соглашение с Банком на выполнение маржинальных сделок.
2.5.12. Հաճախորդը կարող է արժեթուղթ ձեռք բերելու նպատակով Բանկից ստանալ փոխառություն կամ վարկ, ինչպես նաև իրականացնել կարճ վաճառք, եթե Բանկի հետ ունի համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:	2.5.12. Клиент с целью приобретения ценной бумаги может получить от Банка заем или кредит, а также осуществить короткую продажу, если имеет с Банком соответствующее дополнительное письменное соглашение.
2.5.13. Հաճախորդը կարող է նաև Բանկին ներկայացնել Ռեպո գործարքների, ինչպես նաև ածանցյալ գործիքներով գործարքներ կատարելու պատվերներ, եթե ունի Բանկի հետ կնքված համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:	2.5.13. Клиент может представить Банку заявки на совершение сделок Репо, а также сделок с производными инструментами, если имеет с ним соответствующее дополнительное письменное соглашение.
2.6. **Հաշվետվությունների ներկայացման կարգն ու ժամկետները՝**	**2.6. Сроки и порядок предоставление отчетов**

2.6.1. Գործարքը կատարելուց հետո, Բանկը պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը տեղեկատվության փոխանցման Հաճախորդի քարտում նշված տարբերակով տրամադրի պատվերի կատարման մասին հաշվետվություն, Բանկի Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով սահմանված կարգին համաձայն: Հաշվետվությունը պետք է պարունակի ստույգ տեղեկություններ՝ առանց որևէ էական փաստի խեղաթյուրման և/կամ բաց թողման:	2.6.1. После совершения сделки Банк должен незамедлительно, но не позднее окончания следующего рабочего дня после дня заключения сделки, представить Клиенту отчет о выполнении заявки посредством указанного в карте Клиента средства передачи информации, согласно порядку, установленному правилами предоставления Брокерских услуг Банка. Отчет должен содержать точные сведения, без каких-либо существенных искажений и/или упущений.
2.6.2. Եթե Հաճախորդը կամ նրա լիազորված ներկայացուցիչը հաշվետվության տրամադրման պահից 2 օրվա ընթացքում Բանկին չի ներկայացնում առարկություններ գործարքի վերաբերյալ, այդ գործառնությունը համարվում է հաստատված:	2.6.2. Если Клиент или его уполномоченный представитель в течение 2 дней с момента предоставления отчета не представляет Банку возражений относительно сделки, то операции признаются подтвержденными.
2.6.3. Հաճախորդի պատվերը մասնաբաժիններով կատարելու դեպքում, Բանկը Հաճախորդին պետք է ներկայացնի պատվերի կատարման մասին հաշվետվություն՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:	2.6.3. В случае выполнения заявки Клиента по частям, Банк представляет Клиенту отчет о выполнении заявки по каждой части в отдельности.
2.6.4. Բանկը Հաճախորդին եռամսյակը մեկ անգամ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, տրամադրվում է «Պատվերներով կատարված գործարքների մասին հաշվետվություն»:	2.6.4. Ежеквартально, до 15 числа, следующего за этим кварталом месяца, Банк предоставляет Клиенту отчет о “Совершенных по заявке сделках”.
2.6.5. Հաճախորդին Բանկի Բրոքերային ծառայությունների մատուցման կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանված կարգով տրամադրվում են քաղվածքներ դրամային և դեպո հաշիվներից:	2.6.5. Клиенту, согласно правилам предоставления Брокерских услуг Банка и требованиям законодательства РА, предоставляются выписки из денежных и депо счетов.
2.7. **Բանկի և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները՝**	**2.7. Права и ответственность Банка и Клиента**
2.7.1. **Բանկը պարտավոր է՝**	**2.7.1. Банк обязуется:**
4.6.4.Պահառուական գործառնության իրականացման համար՝ հանձնարարականների ներկայացման եղանակն ընտրվում է Հաճախորդի կողմից, դրանք են՝ **<u>Թղթային՝</u>** Թղթային ձևով հանձնարարականները ներկայացվում են 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բանկում, մյուս օրինակը՝ «Հանձնարարականն ընդունված է» նշագրմամբ և պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ, վերադարձվում է Հաճախորդին: **<u>Էլեկտրոնային՝</u>** Այս եղանակով հանձնարարականը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ էլեկտրոնային հասցեով կամ ՍիԲիէյնեթ-ով: Այլ հասցեով ուղարկված հանձնարարականը համարվում է չստացած: Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկին փոխանցի էլեկտրոնային փոստով ուղարկված հանձնարարականի բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված հանձնարարականը ունի նույն իրավաբանական ուժն, ինչ նրա բնօրինակը: Էլեկտրոնային փոստով ուղարկված հանձնարարականի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային փոստով ուղարկված տարբերակը:	4.6.4.Способ представления поручения на совершение депозитарной операции выбирает Клиент, в частности: **<u>Бумажный.</u>** Поручения в бумажной форме представляются в 2 экземплярах, причем один экземпляр остается у Банка, другой – с отметкой «Поручение принятоѣ и подписью ответственного сотрудника возвращается Клиенту. **<u>Электронный.</u>** Этим способом поручение должно быть отправлено по специальному адресу, предоставленному Банком, или «CBAnet»-у. Поручение, отправленное по другому адресу, считается неполученным. Клиент должен за возможно короткие сроки передать в Банк оригинал отправленного по электронной почте поручения. Поручение, направленное по электронной почте, имеет ту же юридическую силу, что и его оригинал. При отличиях между поручением, отправленным электронной почтой, и переданным в дальнейшем оригиналом, в основу принимается вариант, отправленный по электронной почте.

<u>Ֆաքսիմիլային եղանակով հանձնարարականների փոխանցում՝</u> Ֆաքսիմիլային եղանակով հանձնարարական ներկայացնելու համար, Հաճախորդը նախօրոք հեռախոսով պետք է տեղեկացնի պատասխանատու աշխատակցին՝ հանձնարարական ուղարկելու փաստի վերաբերյալ: Հանձնարարականը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ հեռախոսահամարով: Այլ հեռախոսահամարով ուղարկված հանձնարարականը համարվում է չստացած: Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկին փոխանցի ֆաքսիմիլային եղանակով ուղարկված հանձնարարականի բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված հանձնարարականն ունի նույն իրավաբանական ուժն, ինչ նրա բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված հանձնարարականի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում ֆաքսիմիլային եղանակով ուղարկված տարբերակը:	**<u>Передача поручения факсимильным способом</u>**. Для представления поручения факсимильным способом Клиент должен заранее проинформировать ответственного сотрудника по телефону об отправке поручения. Поручение должно быть отправлено по специальному предоставленному Банком телефонному номеру. Отправленное по другому телефонному номеру поручение считается неполученным. Клиент должен за возможно короткие сроки передать в Банк оригинал поручения, отправленного факсимильным способом. Поручение, отправленное факсимильным способом, имеет ту же юридическую силу, что и его оригинал. В случае отличий между поручением, отправленным факсимильным способом, и переданным в дальнейшем оригиналом, в основу принимается вариант, отправленный факсимильным способом.
4.6.5.Հանձնարարականը ենթակա է կատարման դրանում նշված օրվա ընթացքում կամ դրա և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման օրվա ընթացքում՝ գործառնության կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում (արժեթղթերի բավարար մնացորդ, հաշվի կարգավիճակ, հակադարձ հանձնարարականի առկայություն՝ ներպահառուական փոխանցումների դեպքում), սակայն ոչ ուշ, քան հանձնարարականի տրմանը հաջորդող 10-րդ օրացույցային օրը: Չկատարման դեպքում հանձնարարականը հանվում է և կազմվում է գործառնության չկատարման հաշվետվություն:	4.6.5.Поручение подлежит исполнению в течение указанного в нем дня или в течение дня принятия этого поручения и необходимых документов – при наличии условий, необходимых для совершения операции (достаточный остаток ценных бумаг, статус счета, наличие встречного поручения в случае внутридепозитарных переводов), однако не позднее 10-го календарного дня после представления поручения. При невыполнении поручение снимается и составляется отчет о невыполнении операции.

4.6.6.ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, երբ դեպո հաշվում գրառումներ կատարելու նախաձեռնությունը պատկանում է Բանկին, ապա այն իրականացնելու համար հիմք են հանդիսանում ծառայողական հանձնարարականները և ծառայողական փաստաթղթերը, որոնք հաստատում են արժեթղթերի փոխանցման փաստը:	4.6.6.В случаях, установленных законодательством РА, когда инициатива внесения записей на счет депо принадлежит Банку, то основанием для его осуществления являются служебные поручения и служебные документы, которые подтверждают факт передачи ценных бумаг.
4.6.7.Եթե հանձնարարականը չի բավարարում սահմանված պահանջներին, Բանկը մերժում է հանձնարարականի ընդունումը: Մասնավորապես այն մերժվում է, եթե՝ • հանձնարարականը չի բավարարում նրա ձևին ներկայացվող պահանջներին, • հանձնարարականը առաջ է բերում հիմնավոր կասկածներ՝ օրինական լինելու հարցում, • հանձնարարականը պահանջում է այնպիսի գործառնության կատարում, որի իրականացումը սահմանված չէ սույն Պահառության սպասարկման կանոններով, • հանձնարարականի կատարումը կհանգեցնի ՀՀ օրենսդրության պահանջների խախտմանը, • Հաճախորդի դեպո հաշվի կարգավիճակը թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը, • արժեթղթերի քանակը և կարգավիճակը (արժեթղթերի ծանրաբեռնումը երրորդ անձանց իրավունքով, գրավադրում և այլն) թույլ չի տալիս կատարել նշված գործառնությունը, • հանձնարարականը թույլ չի տալիս նույնականացնել արժեթղթերը, • հանձնարարականի հետ ներկայացված չեն անհրաժեշտ փաստաթղթերը, • հանձնարարականի տրման պահից 10 օրացուցային օրվա ընթացքում ի հայտ չեն եկել այն հանգամանքները, որոնց դեպքում հնարավոր կդառնար կատարել հանձնարարականը, • բացակայում է հակադարձ հանձնարարականը կամ տվյալները միմյանց չեն համապատասխանում ներպահառուական գործառնության կատարման համար,	4.6.7. Если поручение не отвечает установленным требованиям, Банк в принятии поручения отказывает. В выполнении депозитарной операции может быть отказано, если: • поручение не отвечает требованиям, предъявляемым к его форме; • поручение вызывает основательные сомнения в отношении его законности; • поручение требует выполнения такой операции, совершение которой не предусмотрено Правилами; • выполнение поручения приведет к нарушению требований законодательства РА; • статус счета депо Клиента не позволяет совершать указанную операцию; • количество и статус ценных бумаг (обременение ценных бумаг правами третьих лиц, залогом и т.п.) не позволяют совершать указанную операцию; • поручение не позволяет идентифицировать ценные бумаги; • необходимые документы не представлены вместе с поручением; • в течение 10 календарных дней с момента представления поручения обстоятельств, при которых выполнение поручения станет возможным, не выявлено; • отсутствует встречное поручение или данные не соответствуют друг другу для выполнения внутридепозитарной операции;

• Հաճախորդը ժամանակին չի կատարել Բանկի ծառայությունների դիմաց սահմանված վճարները և/կամ չի փոխհատուցել Բանկի՝ նախկինում կատարած փաստացի ծախսերը, • այլ հիմքերի առկայության դեպքում:	• Клиент не произвел своевременную оплату за услуги Банка и/или не компенсировал ранее произведенные Банком фактические расходы; • при наличии других оснований.
4.6.8.Մինչև գործառնության կատարումը պահառության գործառնության նախաձեռնողն իրավունք ունի չեղյալ ճանաչել իր կողմից նախապես տրված հանձնարարականը: Չեղյալ կարող է համարվել միայն այն հանձնարարականը, որով ամրագրված գործարքը դեռևս չի կատարվել: Գործառնության չեղյալ ճանաչման գործընթացը Բանկի կողմից կատարվում է առաջնահերթորեն՝ հանձնարարականն անվավեր ճանաչելու դիմումի ընդունման օրը:	4.6.8 Инициатор депозитарной операции вправе до ее совершения признать свое ранее выданное поручение недействительным. Недействительным может быть признано такое поручение, по которому закрепленная в нем сделка еще не совершена. Признание операции недействительной Банк исполняет в первоочередном порядке - в день приема заявления о признании поручения недействительным.
4.6.9.Բանկը կարող է իր մեղքով թույլատրված սխալների վերացման համար կատարել դեպո հաշվի ճշգրտումներ (ուղղումներ): Տվյալ ճշգրտումները կատարվում են սխալների բացահայտման օրվա ընթացքում և հակադարձ գործառնությունների կատարման միջոցով՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի: Նշված գործառնությունների կատարման համար Հաճախորդից որևէ վճար չի գանձվում:	4.6.9 Для устранения допущенных по его вине ошибок, Банк может внести уточнения (корректировки) на счете депо. Данные корректировки совершаются в течения дня выявления ошибок и путем совершения встречных операций - на основании внутренних документов Банка и без дополнительного поручения Клиента. За выполнение указанных операций какой-либо платы с Клиента не взимается.
4.6.10.Հաճախորդի կողմից սխալ հանձնարարականների հիման վրա կատարված գործառնության ճշգրտումը կատարվում է հակադարձ գործառնության կատարման ընդհանուր կարգով:	4.6.10 Уточнение операции, совершенной на основании ошибочных поручений Клиента, производится в общем порядке совершения встречных операций.
4.7.Հաշվետվությունների ներկայացման կարգն ու ժամկետները՝	**4.7. Сроки и порядок предоставления отчетов**

4.7.1.Հաճախորդն իրավասու է ազատ տեղեկանալ իր դեպո հաշվի վերաբերյալ, ինչպես նաև Բանկում հաշվառվող արժեթղթերից բխող իրավունքների իրականացման մասին այլ տեղեկություններին: Այդ տեղեկությունները ինչպես Բանկի նախաձեռնությամբ, այնպես էլ տեղեկատվական հարցման հիման վրա տրամադրվում է Հաճախորդին (Հաճախորդի լիազոր ներկայացուցչին):	4.7.1. Клиент вправе свободно знакомиться со сведениями, касающимися его счета депо, а также реализации прав, вытекающих из учтенных в Банке ценных бумаг. Эти сведения предоставляются Клиенту (уполномоченному представителю Клиента) как по инициативе Банка, так и на основании информационного запроса.
4.7.2.Հաճախորդի դեպո հաշվին, ինչպես նաև Բանկում հաշվառվող արժեթղթերից բխող իրավունքների իրականացմանը վերաբերող տեղեկությունները, որոնք տրամադրվում են տեղեկատվական հարցման հիման վրա, կարող են տրամադրվել նաև՝ • թողարկողին և/կամ ՀՀ ԿԲ-ին, Հայաստանի կենտրոնական Դեպոզիտարիային (ՀԿԴ), օտարերկրյա պահառուին, որի մոտ բացված է Բանկի օտարերկրյա արժեթղթերի անվանատիրոջ հաշիվը՝ ՀՀ օրենսդրությամբ (օտարերկրյա արժեթղթերի դեպքում՝ այդ արժեթուղթը գրանցող երկրի օրենսդրությամբ) սահմանված դեպքերում, • պետական լիազոր մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և իրենց իրավասությունների շրջանակում:	4.7.2 Предоставляемые по информационному запросу сведения, касающиеся счета депо Клиента, а также иные сведения о реализации вытекающих из ценных бумаг прав, учтенных в Банке, могут быть также предоставлены: • эмитенту и/или ЦБ РА, Центральному депозитарию Армении (ЦДА), иностранному депозитарию, в котором открыт счет номинального держателя иностранных ценных бумаг Банка в случаях, установленных законодательством РА (в случае иностранных ценных бумаг – законодательством страны, регистрирующей эти ценные бумаги); • уполномоченным государственным органам в установленных законодательством РА случаях и в пределах их полномочий.
4.7.3.Հաճախորդի դեպո հաշվի հետ յուրաքանչյուր պահառության գործառնության կատարման ավարտին գործառնության նախաձեռնողին է տրամադրվում պահառության գործառնության կատարման մասին հաշվետվություն, որը հանդիսանում է Բանկի պաշտոնական ելքագրվող փաստաթուղթ և ծառայում է հաշվետվություն ստացողի հաշվառման համար գործառնության արտացոլման հիմք: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում տրամադրվում է նաև «Դեպո հաշվից քաղվածք»՝ Պահառության սպասարկման կանոններով սահմանված ձևին համապատասխան:	4.7.3 По завершении каждой депозитарной операции со счетом депо Клиента составляется и предоставляется инициатору этой операции отчет об исполнении депозитарной операции, который является официальным исходящим документом Банка и служит для учета получателя отчета основанием для отражения операции. В случаях, предусмотренных законодательством РА, Клиенту предоставляется также “выписка со счета депо” согласно форме, установленной Правилами.

4.7.4.Բանկի կողմից հաշվետվությունները տրամադրվում են պահառության գործառնության կատարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում՝ Հաճախորդի քարտում նշված եղանակով: Հաճախորդի քարտում հաշվետվությունների տրամադրման եղանակի վերաբերյալ նշումների բացակայության դեպքում Բանկը պարտավոր է փաստաթղթերը տրամադրել բացառապես Հաճախորդին կամ նրա լիազորված ներկայացուցչին:	4.7.4 Отчеты предоставляются Банком в течение следующего рабочего дня после совершения депозитарной операции способом, указанным в карте Клиента. При отсутствии в карте Клиента отметок о способе предоставления отчетов Банк обязан предоставить документы исключительно Клиенту или его уполномоченному представителю.
4.7.5.Եթե Հաճախորդը կամ նրա լիազորված ներկայացուցիչը հաշվետվության տրամադրման պահից 5 օրվա ընթացքում Բանկին չի ներկայացնում պահառուական գործառնության արդյունքների վերաբերյալ առարկություններ, այդ գործառնությունը և դեպո հաշվում արժեթղթերի առկա մնացորդները համարվում են հաստատված:	4.7.5 Если Клиент или его уполномоченный представитель не представляют возражений в течение 5 дней с момента предоставления отчета Банка в отношении результатов депозитарной операции, эта операция и имеющиеся остатки ценных бумаг на счете депо признаются подтвержденными.
4.7.6.Բանկը Հաճախորդին եռամսյակը մեկ անգամ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը տրամադրվում է դեպո հաշվից քաղվածք՝ Պահառության սպասարկման կանոններով սահմանված կարգին համապատասխան:	4.7.6 Банк представляет Клиенту ежеквартально до 15 числа, следующего за этим кварталом месяца выписку со счета депо, согласно порядку, установленному Правилами.
4.7.7.Հաճախորդն իրավունք ունի Բանկում գործող իր դեպո հաշիվների վերաբերյալ ստանալ ցանկացած տեղեկություն, ներառյալ փակված դեպո հաշիվների վերաբերյալ՝ փակման պահից երեք տարվա ընթացքում: Տեղեկատվական հարցումը կարող է պարունակել հետևյալ նշումները (տեղեկատվություն ստանալու համար Հաճախորդը պետք է Բանկ ներկայացնի ազատ ոճով լրացրած հարցում)՝ • հարցմամբ նշված օրվա դրությամբ հաշվառվող արժեթղթերի քանակի վերաբերյալ (բոլոր կամ որոշակի թողարկողի կամ որևէ դասի արժեթղթերի մասով), • քաղվածք հարցմամբ նշված ժամկետում դեպո հաշվով արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ (բոլոր կամ որոշակի թողարկողի կամ որևէ դասի արժեթղթերի մասով), • և այլն:	4.7.7 Клиент вправе получить любые сведения о своих действующих в Банке счетах депо, включая сведения о закрытых счетах депо – в течение трех лет со дня закрытия. Информационный запрос может содержать следующие указания (для получения информации Клиент должен представить в Банк запрос, оформленный в свободном стиле): • о количестве учитываемых ценных бумаг по состоянию на день (в отношении всех или определенного эмитента или ценных бумаг определенного класса), указанный в запросе; • выписка в отношении сделок по ценным бумагам, совершенным на счете депо в указанный в запросе срок (в отношении всех или определенного эмитента или ценных бумаг определенного класса); • и другие.

Լրացուցիչ հաշվետվությունների համար վճարի չափը սահմանվում է Բանկի Սակագներին համաձայն:	Размер оплаты за предоставление дополнительных отчетов устанавливается тарифами Банка.
4.8.Դեպո հաշվի փակման և արժեթղթերը Հաճախորդին վերադարձնելու պայմաններն ու կարգը՝	**4.8. Условия и порядок закрытия счета депо и возврата ценных бумаг Клиенту.**
4.8.1.Հաճախորդի առաջին իսկ պահանջով, ինչպես նաև սույն պայմանագրի դադարեցման, Բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու կամ դադարելու, ինչպես նաև Բանկի լուծարման դեպքերում Բանկը Հաճախորդին տրամադրում է նրան պատկանող արժեթղթերը՝ Հաճախորդի ցուցումով այլ պահառուի (այդ թվում՝ օտարերկրյա պահառուի) մոտ Հաճախորդի անունով վերագրանցելու միջոցով, իսկ փաստաթղթային արժեթղթերի դեպքում՝ նաև այլ պահառուին (այդ թվում՝ օտարերկրյա պահառուին) այդ արժեթղթերը փոխանցելու միջոցով:	4.8.1 По первому требованию Клиента, а также при прекращении настоящего договора, признании лицензии Банка утратившей силу или ее прекращении либо ликвидации Банка, последний по указанию Клиента предоставляет ему принадлежащие ему ценные бумаги путем перерегистрации их на имя Клиента в другом депозитарии (в т.ч. иностранном депозитарии), а в случае документарных ценных бумаг – также путем перевода этих ценных бумаг в другой депозитарий (в т.ч. иностранный депозитарий).
4.8.2.Սույն Պայմանների 4.8.1. կետով սահմանված դեպքում, Պահառության սպասարկման կանոններով սահմանված ժամկետում Հաճախորդի ցուցումը չստանալու դեպքում, արժեթղթերը Հաճախորդի անունով վերագրանցվում են անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում՝ Բանկի և ռեեստրավարի (ՀԿԴ-ի կամ թողարկողի) միջև կնքված համապատասխան պայմանագրով սահմանված կարգով, իսկ օտարերկրյա արժեթղթերի դեպքում՝ այն օտարերկրյա պահառուի մոտ, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես անվանատեր: Փաստաթղթային արժեթղթերի առկայության դեպքում դրանք տրամադրվում են Հաճախորդին:	4.8.2 В случае, установленном пунктом 4.8.1. настоящего Договора, при неполучении указания Клиента в срок, установленный Правилами Банка, ценные бумаги переучитываются на имя Клиента в реестре владельцев именных ценных бумаг в порядке, установленном договором, заключенным между Банком и держателем реестра (ЦДА или эмитентом), а в случае иностранных ценных бумаг – в том иностранном депозитарии, в котором Банк выступает в качестве номинального держателя. При наличии документарных ценных бумаг, они предоставляются Клиенту.

4.8.3.Դեպո հաշիվը չի կարող փակվել, եթե նրանում արժեթղթեր են հաշվառվում: Դեպո հաշվում արժեթղթերի առկայության դեպքում Բանկը գրավոր ծանուցում է Հաճախորդին՝ արժեթղթերը վերադարձնելու նպատակով արժեթղթերի դուրս գրման հանձնարարականի ներկայացման անհրաժեշտության մասին: Արժեթղթերի դուրս գրման հանձնարարական տալու վերաբերյալ Բանկի ծանուցման պահից 10 օրացուցային օրվա ընթացքում Հաճախորդի կողմից արժեթղթերի դուրս գրման հանձնարարական չներկայացվելու դեպքում Բանկն ինքնուրույն կարող է ձեռնարկել անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում Հաճախորդի անունով այդ արժեթղթերը վերագրանցելու գործողություններ՝ ռեեստրավարի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով: Բանկն իրավասու է պահանջել արժեթղթերի վերագրանցման հետ կապված ծախսերի փոխհատուցում:	4.8.3 Счет депо не может быть закрыт, если на нем учитываются ценные бумаги. При наличии на счете депо ценных бумаг Банк письменно уведомляет Клиента о необходимости представления поручения на списание ценных бумаг с целью их возврата. В случае непредставления Клиентом поручения на списание ценных бумаг в течение 10 дней с момента уведомления Банком об этом, последний может самостоятельно предпринять действия по перерегистрации на имя Клиента именных ценных бумаг в реестре владельцев этих ценных бумаг в порядке, установленном заключенным с реестродержателем договоре. Банк вправе потребовать от Клиента возмещения расходов, связанных с перерегистрацией ценных бумаг.
4.8.4.Զրոյական մնացորդներ ունեցող դեպո հաշիվները կարող են փակվել. • Հաճախորդի ցանկությամբ, • Պահառության սպասարկման պայմանագրի դադարեցման դեպքում, այդ թվում՝ պահառության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում, • դեպո հաշվով առնվազն 1 տարի որևէ գործառնություն չիրականացվելու դեպքում, • արժեթղթերի պահպանման վայրերի գործունեության դադարեցման դեպքում, • Պահառուի լուծարման դեպքում:	4.8.4 Счета депо, имеющие нулевые остатки, могут быть закрыты: • по желанию Клиента; в случае прекращения депозитарного договора, в том числе в случае признания лицензии на депозитарную деятельность утратившей силу; • в случае, когда по счету депо в течение более чем 1 года какой-либо операции не осуществлялось; • в случае прекращения деятельности мест хранения ценных бумаг; • в случае ликвидации Банка.
4.8.5.Դեպո հաշվի փակումը կատարվում է միայն Հաճախորդի կողմից պահառության ծառայությունների դիմաց վճարելուց և Բանկի փաստացի ծախսերի փոխհատուցումից հետո:	4.8.5 Счет депо может быть закрыт только после осуществления оплаты Клиентом за оказанные депозитарные услуги и возмещения фактических расходов Банка – в установленном настоящем договором порядке.
4.8.6.Բանկի նախաձեռնությամբ դեպո հաշվի փակումը կարող է իրականացվել Հաճախորդի կողմից Պահառության սպասարկման պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում:	4.8.6 В случае невыполнения Клиентом обязательств, принятых по настоящему договору, Банк может осуществить закрытие счета депо по собственной инициативе.

4.9.Բանկի և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները՝	**4.9.Обязательства и права Банка и Клиента:**
4.9.1.Բանկը պարտավոր է՝	4.9.1.Банк обязуется:
4.9.1.1.Բարեխղճորեն կատարել Հաճախորդի հանձնարարականները և, նրա շահերից ելնելով, իրականացնել արժեթղթերից բխող այն իրավունքները, որոնց կատարման կամ իրականացման պարտավորությունն ստանձնել է սույն Պայմաններով և Պահառության սպասարկման պայմանագրով:	4.9.1.1. Добросовестно исполнять поручения Клиента и в его интересах осуществлять иные вытекающие из ценных бумаг права, обязательство выполнения или осуществления которых он принял на себя по договору.
4.9.1.2.Հաճախորդին ծանոթացնել պահառության գործունեությունը կարգավորող Բանկի Պահառության սպասարկման կանոններին, ինչպես նաև այն բոլոր փաստաթղթերին, որոնք Հաճախորդին անհրաժեշտ են գործառնություն իրականացնելու համար:	4.9.1.2. Ознакомить Клиента с внутренними Правилами Банка, регулирующими депозитарную деятельность, а также иными документами, необходимыми Клиенту для проведения операций.
4.9.1.3.Համաձայն Պահառության սպասարկման կանոնների ապահովել Հաճախորդի դեպո հաշվի վարումը և արժեթղթերի հաշվառումը՝ այլ հաշիվներից առանձնացված կարգով, ինչպես նաև Հաճախորդի արժեթղթերի սեփականության իրավունքի հաշվառումը:	4.9.1.33 Обеспечить в соответствии с Правилами ведение и учет операций по счету депо Клиента отдельно от других счетов, а также надлежащий учет прав на ценные бумаги Клиента.
4.9.1.4.Հաճախորդին աջակցել իրեն պատկանող արժեթղթերի նկատմամբ ունեցած իրավունքների իրացման հարցում՝ Պահառության սպասարկման կանոններով սահմանված կարգով:	4.9.1.4 Содействовать Клиенту в реализации прав по принадлежащим ему ценным бумагам в порядке, указанном в Правилах.
4.9.1.5.Հաճախորդին աջակցել իրեն պատկանող արժեթղթերի նկատմամբ ունեցած իրավունքների իրացման հարցում՝ Պահառության սպասարկման կանոններով սահմանված կարգով:	4.9.1.5 Регистрировать в соответствии с Правилами и действующим законодательством, факты обременения ценных бумаг Клиента обязательствами.
4.9.2.Բանկն իրավունք ունի՝	**4.9.2.Банк имеет право:**
4.9.2.1.Ինքնուրույն փոփոխել հաշվառման գրքերի անվանումները և դրանց վարման կարգերը՝ Բանկի ղեկավար մարմնի կարգադրության (հրամանի) կամ ներքին հրահանգների հիման վրա, ինչպես նաև կատարել դեպո հաշվի ճշգրտումներ (ուղղումներ)՝ իր մեղքով թույլ տրված սխալների վերացման համար:	4.9.2.1. Самостоятельно изменять наименования и порядки ведения книг учета на основании распоряжения (приказа) руководящего органа Банка или внутренних поручений, а также вносить уточнения (корректировки) на счете депо - для устранения допущенных по его вине ошибок.

4.9.2.2.Մերժել պահառության գործառնության կատարումը, եթե Հաճախորդը ժամանակին չի վճարել իրեն մատուցված ծառայությունների համար և/կամ չի փոխհատուցել Բանկի՝ նախկինում կատարած փաստացի ծախսերը (այն դեպքում, երբ Հաճախորդը ժամանակին եղել է տեղեկացված):	4.9.2.2. Отказать в совершении депозитарной операции, если Клиент несвоевременно произвел установленную по его услугам оплату и/или не возместил ранее понесенные им расходы (при условии, что Клиент своевременно был уведомлен об этом).
4.9.2.3.Գաղտնի տեղեկատվություն հայտնել երրորդ անձանց՝ հաճախորդի գրավոր համաձայնության դեպքում:	4.9.2.3 Раскрыть конфиденциальную информацию третьим лицам, в случае письменного согласия Клиента.
4.9.2.4.Օգտագործել Հաճախորդի քարտում ներկայացված տեղեկությունները «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների ապահովման նպատակով:	4.9.2.4 С целью обеспечения требований, установленных Законом РА о «Борьбе с отмыванием денег и финансированием терроризма», использовать сведения, представленные в карте Клиента.
4.9.2.5.Հաճախորդին լրացուցիչ այլ ծառայություններ մատուցել՝ օրենքով և իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրերին համապատասխան:	4.9.2.5 Предоставлять Клиенту иные дополнительные услуги в соответствии с установленным законом и правовыми актами, а также в соответствии с договорами, заключенными между Банком и Клиентом.
4.9.2.6.Հաճախորդի դրամական միջոցներն օգտագործել ի շահ իրեն:	4.9.2.6 Использовать денежные средства Клиента в свою пользу.
4.9.2.7.Մերժել արժեթղթերի փոխանցման հանձնարարականը, եթե Պահառուի հիմնարար կարծիքով հանձնարարականի կատարումը կարող է բերել շուկայի չարաշահման՝ այդ մասին պատշաճ կերպով տեղեկացնելով հաճախորդին:	4.9.2.7 Отклонить заявку перевода ценных бумаг, подобающим образом об этом сообщив Клиенту, если исполнение заявки, по обоснованному мнению Банка, может привести к злоупотреблению рынком.
4.9.3.Հաճախորդը պարտավոր է՝	**4.9.3. Клиент обязуется:**
4.9.3.1.Ծանոթանալ Պահառության սպասարկման կանոններին և անվերապահորեն դրանք պահպանել:	4.9.3.1. Ознакомиться с утвержденными Правилами и неукоснительно их соблюдать.
4.9.3.2.Ծանոթանալ Բանկի Սակագներին և ժամանակին վճարել Բանկին ծառայությունների դիմաց:	4.9.3.2. Ознакомиться с тарифами Банка (далее-тарифы) и своевременно оплачивать услуги Банка.
4.9.4.Հաճախորդն իրավունք ունի՝	**4.9.4. Клиент имеет право:**

4.9.4.1.Բանկի կողմից Հաճախորդի դեպո հաշվի մասին գաղտնիք ներկայացնող տեղեկություններ երրորդ անձի հայտնելու դեպքում, խախտված իրավունքի վերականգման նպատակով Բանկից պահանջել վնասի հատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:	4.9.4.1. С целью восстановления нарушенного права, потребовать от Банка возмещения ущерба, в порядке, установленном законодательством РА, в случае разглашения Банком конфиденциальных сведений третьему лицу о счете депо Клиента, за исключением предусмотренных законодательством РА случаев.
4.9.4.2.Նշանակել դեպո հաշվի լիազորված մի քանի ներկայացուցիչներ՝ անհրաժեշտության դեպքում սահմանափակելով նրանց լիազորությունները:	4.9.4.2. Назначить несколько уполномоченных представителей по счету депо, ограничивая при необходимости их полномочия.
4.10.Կողմերի պատասխանատվությունը՝	**4.10.Ответственность сторон**
4.10.1.Պահառության սպասարկման հետ կապված վեճերը և անհամաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն Պայմաններով, Պահառության սպասարկման կանոններով և Պահառության սպասարկման պայմանագրով ու դրան կից կնքված համաձայնագրերով սահմանված կարգով:	4.10.1. Споры и несогласия, связанные с Депозитарными услугами, разрешаются в порядке, установленном законодательством РА, настоящим договором, Правилами Депозитарных услуг, Договором о Депозитарном обслуживании и в установленном порядке прилагаемыми к нему заключеннными соглашениями.
4.10.2.Կողմերը ՀՀ օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում սույն Պայմաններից, Պահառության սպասարկման պայմանագրից բխող իրենց փոխհարաբերությունների մասին գաղտնի տեղեկատվությունը բացահայտելու համար:	4.10.2. Стороны несут ответственность согласно законодательству РА за раскрытие конфиденциональной информации относительно взаимоотношений, вытекающих из условий данного договора.
4.10.3.Հաճախորդը պարտավոր է անմիջապես Բանկին ներկայացնել դեպո հաշվի բացման համար ներկայացված փաստաթղթերում կատարված լրացումները ու փոփոխությունները, ինչպես նաև ժամանակին ծանուցել Հաճախորդի կապի միջոցների վավերապայմաններում և դեպո հաշվով գործառնություններ կատարելու լիազորություն ունեցող անձանց ցուցակում փոփոխությունները: Նշված փոփոխությունների մասին ժամանակին չտեղեկացնելու դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից հաշվետվություններ, քաղվածքներ ժամանակին չստանալու համար, ինչպես նաև դրա հետևանքով պատճառված վնասի համար: Իր կողմից Բանկը պատասխանատու է գրանցել դեպո հաշվում տեղեկությունների փոփոխությունը փաստաթղթերի ներկայացման պահից մեկ օրվա	4.10.3. Клиент обязан незамедлительно представить Банку изменения и дополнения, внесенные в представленные для открытия счета депо документы, а также своевременно извещать об изменениях реквизитов своих средств связи и списка лиц, имеющих полномочия на совершение операций по его счету депо. В случае несвоевременного извещения об указанных изменениях Банк не несет ответственности за несвоевременное получение Клиентом отчетов, выписок, а также причиненный вследствие этого ущерб. В свою очередь Банк обязан зарегистрировать изменения на счете депо в течение одного дня с момента представления документов, если для регистрации изменения представлены документы в полной совокупности и отвечающие требованиям, установленным Банком.

ընթացքում, եթե փոփոխությունը գրանցելու համար ներկայացված փաստաթղթերը ամբողջական են և բավարարում են Բանկի կողմից սահմանված պահանջներին:	
4.10.4.Կողմերը պարտավոր են փոխհատուցել այն վնասները, որոնք տեղի են ունեցել իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում, եթե չապացուցվի, որ դրանք առաջացել են անհաղթահարելի ուժի պատճառով:	4.10.4. Стороны обязаны возместить те убытки, которые были выявлены в результате невыполнения или ненадлежащего выполнения ими своих обязанностей, если не будет доказано, что убытки произошли по причине непреодолимой силы.
4.10.5.Հաճախորդը պետք է Բանկին փոխհատուցի այն ծախսերն ու վնասերը, որոնք առաջացել են իր պատճառով, իրական վնասի չափով՝ Բանկի համապատասխան գրավոր ծանուցումը ստանալուց հետո ոչ ավել քան 3 աշխատանքային օրում:	4.10.5. Клиент должен возместить Банку прочие издержки и убытки, возникшие по вине Клиента, в размере реального ущерба в срок, не превышающий 3 рабочих дней с момента получения письменного извещения Банку.
4.10.6.Բանկը պատասխանատվություն չի կրում տեղեկատվական հարցում կատարող անձանց կողմից երրորդ անձանց շրջանակում Բանկի կողմից նրանց տրամադրած գաղտնի տեղեկատվության բացահայտման համար:	4.10.6. Банк не несет ответственности за раскрытие лицами, сделавшими информационный запрос, предоставленной им секретной информации третьим лицам.
4.11.Ընդհանուր բնույթի բոլոր ծանուցումները, պահառության պայմանների փոփոխությունները, հանձնարարականների լրացմանը վերաբերող փոփոխությունները, ինչպես նաև թողարկողներից ստացված տեղեկությունները՝ այդ թվում՝ արժեթղթերի դիմաց եկամուտների վճարման և այլնի վերաբերյալ տեղակայվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում: Ինտերնետային կայքում տեղակայելուն զուգահեռ՝ Բանկը Հաճախորդի քարտում նշված վավերապայմաններով էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է ընդհանուր բնույթի ծանուցումները: Ծանուցման օր է համարվում ինտերնետային կայքում ծանուցման տեղակայման օրը: Պահառուն պատասխանատվություն է կրում ինտերնետային կայքում վերոհիշյալ ծանուցման ժամանակին տեղակայելու համար:	4.11. Все уведомления общего характера относительно изменения условий депозитарного обслуживания всех клиентов, заполнения поручений, а также информация от эмитентов, в том числе о выплатах доходов по ценным бумагам и проч., размещаются на веб-сайте Банка в Интернете. Наряду с размещением сведений общего характера на своем веб-сайте, Банк направляет их Клиенту электронной почтой по указанным в его карте реквизитам. Датой уведомления считается дата размещения уведомления на веб-сайте в Интернете. Банк несет ответственность за своевременное размещение вышеуказанного уведомления на своем веб-сайте в Интернете.
5. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ/ԿԱՄ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ	**5. БРОКЕРСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ И/ИЛИ ДЕПОЗИТАРНОЕ ОБСЛУЖИВАНИЕ. ПОРЯДОК ПРИЕМА И РАССМОТРЕНИЯ ЖАЛОБ**

5.1. Կողմերը պարտավորվում են խուսափել «Արժեթղթերի շուկային մասին» ՀՀ օրենքի իմաստով շուկայի չարաշահումներից, հետևել ազնիվ և բարեխիղճ առևտրի սկզբունքներին և ՀՀ օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում շուկայի չարաշահումներ իրականացնելու համար:	5.1. Стороны обязуются избегать злоупотребления рынком в смысле, установленном законом РА “О рынке ценных бумаг”, следовать принципам честной и добросовестной торговли и несут ответственность за осуществление злоупотребления рынком согласно законодательству РА.
5.2. Բրոքերային և/կամ Պահառության սպասարկման պայմանագրով, «ՎՏԲ կապիտալ բրոքեր» ՍՊԸ կողմից սպասարկվող առեվտրային համակարգի միջոցով բրոքերային գործարքների կատարումը եվ դիտման հասանելիության տրամադրման համաձայնագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) ազդեցության հետևանք, որոնք ծագել են Բրոքերային և/կամ Պահառության սպասարկման պայմանագրերը, «ՎՏԲ կապիտալ բրոքեր» ՍՊԸ կողմից սպասարկվող առեվտրային համակարգի միջոցով բրոքերային գործարքների կատարումը եվ դիտման հասանելիության տրամադրման համաձայնագիրը կնքելուց հետո արտակարգ իրավիճակների արդյունքում, որոնք կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:	5.2. Договорами Брокерсого и/или Депозитарного обслуживания, соглашение " О предоставлении доступа для наблюдения и заключения сделок в торговой системе, обслуживаемой ООО “ВТБ Капитал Брокер” Стороны освобождаются от ответственности за частичное или полное неисполнение обязательств, если оно явилось следствием обстоятельств непреодолимой силы (форс-мажор), возникших после заключения договоров Брокерсого и/или Депозитарного обслуживания, соглашения "О предоставлении доступа для наблюдения и заключения сделок в торговой системе, обслуживаемой ООО “ВТБ Капитал Брокер” в результате событий чрезвычайного характера, которые стороны не могли предвидеть или предотвратить.
5.3. Բրոքերային գործունեության և/կամ պահառության սպասարկման հետ կապված բողոքների ընդունումը և քննարկումը կատարվում է Բանկի գործադիր մարմնի ղեկավարի կողմից:	5.3.Прием и рассмотрение жалоб, связанных с брокерской деятельностью и/или депозитарным обслуживанием, осуществляются руководителем исполнительного органа Банка.
5.4. Բանկին ներկայացվող բողոքը պետք է կազմված լինի գրավոր և ստորագրված լինի Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) կողմից: Բողոքում նշվում են՝ բողոքարկման պահանջը, գումարը և հաշվարկման հիմնավորումը (եթե բողոքը ենթակա է դրամական գնահատման), պահանջի ներկայացման հիմք հանդիսացող հանգամանքները և ապացույցները՝ հղում կատարելով համապատասխան նորմատիվ ակտի, Բրոքերային և/կամ Պահառության սպասարկման պայմանագրի, «ՎՏԲ կապիտալ	5.4. Представляемая Банку жалоба должна быть состалена в письменной форме и подписана клиентом (его представителем). В жалобе отмечаются предмет обжалования, сумма и обоснование расчета, если жалоба подлежит денежной оценке, обстоятельства и доказательства, являющиеся основанием для представления жалобы, со ссылкой на соответствующий нормативный акт, положения договоров Брокерсого и/или Депозитарного обслуживания, соглашения "О предоставлении доступа для наблюдения и заключения сделок в

բրոքեր» ՍՊԸ կողմից սպասարկվող առեվտրային համակարգի միջոցով բրոքերային գործարքների կատարումը եվ դիտման հասանելիության տրամադրման համաձայնագրի դրույթներին, բողոքարկմանը առնչվող փաստաթղթերի և այլ ապացույցների ցանկը, այլ փաստաթղթերը և տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են վեճը լուծելու համար:	торговой системе, обслуживаемой ООО “ВТБ Капитал Брокер”перечень документов и других доказательств, касающихся обжалования, другие документы и информация, которые необходимы для разрешения спора.
5.5. Բողոքի քննարկումն իրականացվում է դրա ստացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքի քննարկման արդյունք է հանդիսանում Հաճախորդին պատասխան գրության պատրաստումը և տրամադրումը: Պատասխան գրության մեջ նշվում են՝ բողոքի լրիվ կամ մասնակի բավարարման դեպքում բողոքի բավարարման եղանակն ու ժամկետները, բողոքի լրիվ կամ մասնակի մերժման դեպքում մերժման հիմքերը՝ հղում կատարելով համապատասխան նորմատիվ ակտի, Բրոքերային և/կամ Պահառության սպասարկման պայմանագրի, «ՎՏԲ կապիտալ բրոքեր» ՍՊԸ կողմից սպասարկվող առեվտրային համակարգի միջոցով բրոքերային գործարքների կատարումը եվ դիտման հասանելիության տրամադրման համաձայնագրի դրույթներին և ապացույցները:	5.5. Жалоба рассматривается в течение 5 рабочих дней с момента ее получения. Результатом жалобы является подготовка и предоставление клиенту ответного письма. В ответном письме указываются – в случае полного или частичного удовлетворения жалобы – способ и сроки удовлетворения жалобы, в случае же полного или частичного отказа в жалобе – основания отказа со ссылкой на соответствующий нормативный акт, статьи договоров Брокерсого и/или Депозитарного обслуживания, соглашения "О предоставлении доступа для наблюдения и заключения сделок в торговой системе, обслуживаемой ООО “ВТБ Капитал Брокер” и доказательства.
5.6. Բողոքի լրիվ կամ մասնակի մերժման դեպքում Հաճախորդն իրավունք ունի բողոքարկման հիմքով հայց ներկայացնել համապատասխան դատական մարմիններին:	5.6. В случае полного или частичного отказа в жалобе Клиент имеет право представить иск об обжаловании в соответствующие судебные органы.